ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 73 ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ ՀԱՄԱԼՐԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՐՔԵՐԸ

28.11.2015 18:37

ՀՀ փաստաբանական դպրոցի 73 շրջանավարտներ, որոնք հաղթահարել էին որակավորման քննությունները, այսօր՝ նոյեմբերի 28-ին, ստացել են փաստաբանական գործունեության արտոնագրեր:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի հանդիսավոր նիստում շրջանավարտները երդվեցին ***ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով***:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը շնորհավորելով նոր արտոնագիր ստացած փաստաբաններին՝ խորհուրդ է տվել հեռու մնալ կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացներից: Արա Զոհրաբյանն իր խոսքում նշել է. ‘**Փաստաբանի աշխատանքը չի սկսվում և ավարտվում վստահորդի հանձնարարությունների կատարմամբ: Պետք է հիշել, որ փաստաբանը հասարակության մեջ հատուկ դեր է ստանձնում: Մենք այսօր առավել հզորացանք Ձեր անդամակցությամբ’:**

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը նույնպես շնորհավորել է արտոնագիր ստանալու կապակցությամբ և մաղթել բեղմնավոր գործունեություն և հորդորել, որ դպրոցի շրջանավարտները փաստաբանական գործունեություն ծավալելիս չկորցնեն կապը Փաստաբանական դպրոցի հետ:

Իսկ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբան Կարեն Մեժլումյանն էլ իր գործընկերներին կոչ է արել վստահորդի հետ ճիշտ հարաբերություններ կառուցել, իսկ վեճերի դեպքում դրանք լուծել արտադատական կարգով:

Ելույթով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդամ Սեդրակ Ասատրյանը՝ ներկայացնելով իր խորհուրդները փաստաբանի դժվարին աշխատանքում:

Երդման արարողությանը ներկա էր և ելույթ ունեցավ նաև ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Զարուհի

Փոստանջյանը: Տիկին Փոստանջյանը տեղեկացրել է, որ 16 տարի առաջ, ինքը նույնպես համալրել է փաստաբանների շարքերը: Ըստ Փոստանջյանի՝ «**2006թ. երբ իմ դիմաց բացարձակ պատ էր ու կանգնած էի բիրտ ուժի դիմաց, սակայն ցմահ ազատազրկման դատավճիռը բեկանվեց, և իմ պաշտպանյալներն ազատ արձակվեցին, իսկ այսօր նրանցից մեկը՝ Արայիկ Զալյանը համալրում է ազատամիտների այս համայնքը**»:

Ելույթների շարքը եզրափակեցին փաստաբանական դպրոցի չորս շրջանավարտներ:



Best Western
CONGRESS HOTEL
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Best Western
CONGRESS HOTEL
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })